«ԵՐԵՎԱՆԻՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԻՋԵՎԱՆԻՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆԳԻՏԱԿԱՆԸՆԿ
ԵՐՈՒԹՅՈՒՆ

IJEVANBRANCHOF
"YEREVAN STATE UNIVERSITY"
FOUNDATION

STUDENT SCIENTIFIC
SOCIETY

ՀՀ, Իջևան, 4001, Ուսանողական 1,
sssysuib@gmail.com, ijevan.ysu.am

1 Usanoghakan, 4001, Ijevan, RA
Tel: (+374) 94-55-75-23

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի

Ուսանողական գիտական ընկերության

(2022-2023 թթ. ուսումնական տարվա 1-ին կիսամյակ)

ք. Իջևան «08» սեպտեմբեր, 2022թ.»

№	Իրականացված միջոցառման բնույթը	Խորագիրը / Թեման	Անցկացման օրը / շաբաթը	Համառոտ նկարագրությունը
ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
1.	Իվենթ	«Ուսանողի դերը պետության կայացման գործում»	Սեպտեմբերի 25	Իվենթի նպատակն է ներկայացնել ուսանողի դերի կարևորությունը պետության զարգացման, կայացման գործընթացում, որովհետև յուրաքանչյուր կառույցի կայացման ակունքներում կանգնած է կրթված ու բանիմաց մարդը:

2.	Բանահավաքչություն	-	-	Նպատակն է ուսումնասիրել, «պեղել» և հանրությանը ներկայացնել մեր ժողովրդի բառն ու բանը: Ուսանողները կհավաքեն ավանդություններ, զրույցներ, երգիծական պատմություններ, խաղիկներ, երգեր, օրհնանքներ, անեծքներ և այլն, որոնց միջոցով աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական և այլ տեղեկություններ կփոխանցեն լսարանին: Ծրագրի մեկնարկը տրվել է նախորդ կիսամյակ:
3.	Այց ԵՊՀ, հանդիպում տեղի ուսանողների հետ:	-	Նոյեմբեր	Չափազանց կարևոր է Մայր բուհի և մասնաճյուղի սերտ կապն ու համագործակցությունը, ուստի անհրաժեշտ է կազմակերպել հանդիպումներ, մշակել ծրագրեր, որոնցով ավելի կամրապնդվեն հարաբերությունները: Այս նպատակով նախատեսվում է այց ԵՊՀ: Կկազմակերպվի նաև բանախոսություն:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
4.	Այց ՀՊՏՀ	«Փորձի փոխանակում»	Սեպտեմբերի 26	Այցի նպատակն է ներկայացնել ԵՊՀ ԻՄ ՏԳՖ ՈՒԳԸ-ի գործունեությունը, իրականացնելփորձիփոխանակում և համագործակցության ուղիներ գտնել: Հիմք դնել համալսարանների միջև սերտ փոխհարաբերությունների ստեղծման համար:
5.	Բանախոսություն և գրքերի ցուցահանդես	«8 մտքեր փողի մասին»	Հոկտեմբերի 5	Գրող Հրաչյա Մանուկյանը կկիսվի իր անձնական փորձով, կներկայացնի իր հրատարակած գրքերը և փողի մասին պատկերացումները:
ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ				
6.	Դասընթաց	«C++-ի հիմունքներ»	Նոյեմբերի 18	Դասընթացին մասնակցում են ԻԿՄ առաջին և երկրորդ կուրսի ուսանողները: Հիմնական նպատակը ուսանողների բացթողնված գիտելիքների լրացումն է, ալգորիթմական մտածողության զարգացումը և c++ լեզվով տարբեր ծրագրերի իրականացումը:
7.	Այց Իջևանի ծրագրավորման կազմակերպությունն	Ծանոթացում ապագա մասնագիտության	Սեպտեմբերի	Այցի նպատակն է, որ ուսանողները ծանոթանան աշխատաշուկային, ծանոթանան կազմակերպությունների

	ր	առավելություններին և թերություններին աշխատաշուկայում	23	աշխատանքին: Այցին կարող են մասնակցել բնագիտական ֆակուլտետում սովորող ուսանողները:
ՈՒԳԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑ				
8.	Իրազեկում	«ԵՊՀ Իմ-ի ՈՒսանողական գիտական ընկերության 20-ամյակ»	Սեպտեմբեր	Իրազեկումը իրականացվելու է բոլոր ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների համար ԵՊՀ Իմ-ի ՈՒսանողական գիտական ընկերության 20-ամյակին նվիրված: Իրազեկումն անց կկացնեն ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ նախագահության անդամները, ներկա կլինի նաև ԵՊՀ ԻՄ-ի նախկին ՈՒԳԸ նախագահը: Իրազեկման նպատակն է առաջին կուրսի ուսանողներին ծանոթացնել ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ-ի աշխատանքներին ու գործունեությանը՝ հետագայում այդ ուսանողներից ՈՒԳԸ-ի աշխատանքներին ընդգրկելու համար:
9.	Դասընթաց	«Ինչպես շարունակել կրթությունը արտերկրում»	Սեպտեմբեր	Դասընթացի ժամանակ կներկայացվեն, թե ինչպես կրթությունը շարունակել արտերկրում կամ ինչպես սովորել արտերկրում: Ինչ է իրենից ներկայացնում կամավորությունը: Դասընթացի նպատակն է մոտիվացնել ուսանողներին և տալ լրացուցիչ գիտելիքներ ուսումն արտերկրում շարունակելու համար: Դասընթացի վերջում կկատարվի քննարկում հարց ու

				պատասխան ձևով։
10.	Ինտելեկտուալ խաղ	«Ամենախելացին»	Հոկտեմբեր	Խաղը կընթանա 3 փուլով։ • Առաջին փուլը կանցկացվի quizizz.com կայքի միջոցով։ • Երկրորդ և երրորդ փուլերը կհամապատասխանեն հեռուստախաղի ձևաչափին։ Խաղի վերջում մասնակիցները կստանան հավաստագրեր, իսկ հաղթողը՝ պատվոգիր և այլ խրախուսումներ։
11.	Գիտատաժողով	«ԵՊՀ ԻՄ ուսանողների հոդվածները»	Հոկտեմբեր-դեկտեմբեր	Գիտաժողովը նվիրված է ԵՊՀ ԻՄ ուսանողների գրած գիտական հոդվածներին։ Նպատակն է ուսանողական, գիտական ևս մեկ ծրագիր իրականացնել։ Այն ուսանողները՝ ովքեր ունեն հոդվածներ, կներկայացնեն այս ծրագրի շրջանակներում։ Որից հետո գիրք կտպագրվի, որի մեջ ներառված կլինեն այդ հոդվածները։

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ նախագահ Անի Թիրաբյան

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ քարտուղար Լիդա Ցուցուլյան